ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

ՄԱՍ I

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի զարգացման 2023-2027 թվականների հնգամյա և 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Ջրվեժ համայնքի 2026 թվականի ծրագրերի առաջնահերթությունները, 2025 թվականին իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց իրականացման արդյունավետությունը, Ջրվեժ համայնքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ են համարվում համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ միջավայրի ձևավորմանը, համայնքային ենթակառուցվածքների բարելավմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերը:

Ջրվեժ համայնքի 2026 թվականի համար նախատեսված ծրագրերի իրականացումը հիմնված է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի իրագործման համար առաջնահերթ են համարվելու.

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունն ու բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Համայնքի վարչական սահմաններում հանրային տարածքների և պատմամշակութային արժեքների պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների և քննարկումների միջոցով:
5. Իրավահավասար և ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
7. Համայնքային ենթակայության հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
8. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի շարունակական ներդրումը:
9. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը:
10. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
11. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային միջոցառումների խթանումը:
12. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը և ընթացիկ սպասարկումը:
13. Համայնքային սոցիալական ծառայությունների արդիականացումը, սոցիալական ծրագրերի իրականացումը:
14. Համայնքում ջրամատակարարման համակարգի բարելավումը և ընդլայնումը:

ՄԱՍ II
Բացատրագիր-Հիմնավորում

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծի

2026 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են հաշվեկշռվածությունը, միջոցների օգտագործման արդյունավետությունը, հրապակայնության ապահովումը, իրատեսությունը, հասցեագրվածությունը և նպատակայնությունը:

Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

- ✓ *եկամուտների գծով՝* ***1,024,730.7*** *հազար դրամ,*
- ✓ *ծախսերի գծով՝* ***3,599,260.7*** *հազար դրամ,*
- ✓ *դեֆիցիտը՝* ***2,574,530.0*** *հազար դրամ:*

1. Եկամուտների կանխատեսում.

Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 1,024,730.7 հազար դրամ: Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեն ի սկզբանե հաստատվել է 899 368.0 հազար դրամ, ճշտված բյուջեն 1,296,808.9 հազար դրամ, իսկ 2024 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 775,309.8 հազար դրամ: Նախատեսված եկամուտները ավելացել են 2025 թվականի ճշտված նույն ցուցանիշի նկատմամբ 8,010.5 հազար դրամով կամ 0,8%-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ ներկայացվում է ստորև.

1.1 Հարկեր և տուրքեր

Հարկերի և տուրքերի գծով եկամուտը ծրագրվել է 561,482.5 հազար դրամի չափով, 2025 թվականի համար նախատեսված ցուցանիշից 33,072.1 հազար դրամով կամ 6.3 %-ով ավել:

Գույքային հարկերի գծով եկամուտները ծրագրվել են 507,554.0 հազար դրամի չափով կամ 2025 թվականի համար հաստատված ցուցանիշից 154,698.3 հազար դրամով կամ 43,8 %-ով ավել, ընդ որում ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառման արդյունքում հարկային եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է անշարժ գույքի մասով եկամտատեսակից, որից.

- Անշարժ գույքից գույքային հարկերը նախագծով նախատեսվել է 356,254.0 հազար դրամ կամ 2025 թվականի համար հաստատված ցուցանիշից 117,161.3 հազար դրամով ավելի, իսկ 2024 թվականի փաստացի ցուցանիշից 178,677.4 հազար դրամով:
- Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 151,300.0 հազար դրամ, 2025 թվականի բյուջեով հաստատված 113,763.0 հազար դրամի դիմաց կամ 37,537.0 հազար դրամով ավել, իսկ 2024 թվականի փաստացի հավաքագրված գումարից 31,281.7 հազար դրամով:

Տեղական տուրքերի գծով 2026 թվականին ծրագրվել են 53,928.5 հազար դրամի մուտքեր, 2025 թվականին նախատեսված 175,554.7 հազար դրամի դիմաց կամ 121,626.2 հազար դրամով ավել, ընդ որում նվազեցումը պայմանավորված է 2025 թվականի ընթացքում բազմահարկ շենքերի կառուցման նպատակով համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության թույլտվության տեղական տուրքերի հաշվարկով:

1.2 Պաշտոնական դրամաշնորհներ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծի նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 321,051.2 հազար դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, 2025 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 6,846.2 հազար դրամով ավել:

1.3 Այլ եկամուտներ

Այլ եկամուտները 2026 թվականի նախագծով ծրագրվել են 142,197.0 հազար դրամ, 2025 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 173,735.2 հազար դրամի դիմաց: 2025 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ եկամուտը նվազել է՝ 31,538.2 հազար դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված ցուցանիշով:

Ամփոփելով Ջրվեժ համայնքի 2026 թվական բյուջեի նախագծով առաջարկվող եկամտային մասը՝ ներկայացվում է 2026 թվականի ընդամենը եկամուտների վերլուծությունը՝ ըստ առանձին խմբերի տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ (տե՛ս Գծապատկեր 1).

Գծապատկեր 1



2. Ծախսերի կանխատեսում.

Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 3,599,260.7 հազար դրամի չափով: Ծախսերից 1,208,832.4 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), որտեղ 71,750.0 հազար դրամը հատկացվել է բյուջեի պահուստային ֆոնդին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի գումարը կազմում է 22,000.0 հազար դրամ: Նախագծի ծախսային մասը ավել է 2025 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ 432,068.7 հազար դրամով:

Ստորև ներկայացվում է Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծի՝ բյուջետային գործառական դասակարգման տեսակարար կշիռը՝ ընդամենը ծախսերի կազմում *(տե՛ս. Գծապատկեր 2):*

Գծապատկեր 2

Ստորև ներկայացվում են Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

<u>1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</u> ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ ելնելով գործունեության առանձնահատկություններից: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 247,259.4 հազար դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 6,7%–ը, ինչը 2025 թվականի հաստատված համապատասխան ցուցանիշից պակաս է 7,200.2 հազար դրամով: Նշված ծրագրով նախատեսված ***<u>աշխատավարձի ֆոնդը</u>***՝ 145,684.0 հազար դրամ է: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է համայնքի ավագանու կողմից 2025 թվականի համար հաստատված հաստիքացուցակի հիման վրա: ***<u>Պարգևատրման ֆոնդը</u>*** նախատեսվել է 35,978.4 հազար դրամ: ***<u>Էներգետիկ ծառայությունները</u>*** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2026 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, ինչպես նաև ներկայումս գործող հանրային ծառայությունների սակագները: Մասնավորապես, այս հոդվածով 2026 թվականին նախատեսվել է 5,058.0 հազար դրամ՝ 2025 թվականի հաստատված ցուցանիշի չափով: ***<u>Կոմունալ ծառայությունները</u>*** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման ծախսերը և ծրագրվել են 58.0 հազար դրամի չափով: ***<u>Կապի ծառայությունները</u>*** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային կապի ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 2,400.0 հազար դրամ: ***Ապահովագրական ծախսերը*** նախատեսվել են 950.0 հազար դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի պահանջները, սահմանված գները և համայնքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: ***Գույքի և սարքավորումների վարձակալությունը*** ծրագրվել է 200.0 հազար դրամ: ***Համակարգչային ծառայությունների*** գծով ծրագրվել է 2,300.0 հազար դրամ՝ Ջրվեժի համայնքապետարանի պաշտոնական կայքի, հաշվապահական հաշվառման համակարգերի, ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված GPS էլեկտրոնային համակարգերի սպասարկման համար: ***Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների*** համար նախատեսվել է 550.0 հազար դրամ՝ նեղ մասնագիտական վերապատրաստման համար աշխատակիցների մասնակցելու գործընթացը ապահովելու համար: ***Ներկայացուցչական ծախսերը*** նախատեսվել են 250.0 հազար դրամի չափով, ***ընդհանուր բնույթի այլ ծառայությունների*** գծով ծախսերը նախատեսվել են 100.0 հազար դրամ: ***Մասնագիտական ծառայությունների*** գծով նախատեսվել է 185.0 հազար դրամի չափով ծախս՝ գազի և սպասարկման ծառայության համար: ***Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման*** գծով ծրագրվել 4,500.0 հազար դրամ, որը ներառում է համայնքապետարանում հաշվառված ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել է համայնքապետարանի հաշվեկշռում ընդգրկված և շահագործվող գույքի, այդ թվում ավտոմեքենաների քանակական և որակական ցուցանիշները: ***Գրասենյակային նյութեր և հագուստ*** հոդվածով ծախսերը ծրագրվել են 1,500.0 հազար դրամ, որը հաշվարկվել է հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: ***Տրանսպորտային նյութերը*** ծրագրվել են 4,200.0 հազար դրամի չափով, հաշվարկը իրականացվել է համայնքապետարանին, աշխատակազմին և վարչական ղեկավարներին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով: ***Կենցաղային և հանրային սննդի ծառայությունների*** գծով նախատեսվել է 1,000.0 հազար դրամ, որը հաշվարկված է աշխատակիցների համար տնտեսական ապրանքների ձեռք բերման անհրաժեշտությամբ: ***Հատուկ նպատակային այլ նյութերի*** գծով ծրագրվել է 100.0 հազար դրամ: ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով ծրագրվել է 728.0 հազար դրամ, ինչը ներառում է Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենքի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի պահպանման և ընթացիկ նորոգման ծախսերը: ***Պարտադիր վճարների*** գծով՝ համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 200.0 հազար դրամ: ***Վարչական սարքավորումների*** գծով ծրագրվել է 21,500.0 հազար դրամ: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է համայնքապետարանի համար ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա՝ արդեն օգտագործման ոչ պիտանի, դուրս գրման ենթակա գույքը փոխարինելու, նոր աշխատակիցներին աշխատանքային գույքով ապահովելու նպատակով: ***Այլ մեքենաներ և սարքավորումների*** գծով նախատեսվել է 3,000.0 հազար դրամ: ***Ընդհանուր բնույթի ծառայություններ*** ծրագրի Համակարգչային ծառայությունների գծով նախատեսվել է 2,568.0 հազար դրամ՝ համայնքների եկամուտների էլեկտրոնային կառավարման համակարգի սպասարկման համար՝ 2025 թվականի ցուցանիշին հավասար: ***Կառավարչական ծառայությունների*** գծով նախատեսվել է 4,000.0 հազար դրամ՝ իրավաբանական և ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով: ***Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների*** գծով ծախսերը նախատեսվել են 2,500.0 հազար դրամ՝ փաստաթղթերի արխիվացումը կազմակերպելու նպատակով: ***Պարտադիր վճարների*** գծով ծախսերը նախատեսվել են 50.0 հազար դրամ: ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** ծրագրի Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով նախատեսվել է 3,000.0 հազար դրամ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի չափագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով: ***Գրասենյակային նյութեր և հագուստ*** հոդվածում նախատեսվում է 1,000.0 հազար դրամ: Ծախսերն ուղղվելու են մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար ծաղկեպսակների և ծաղկեփնջերի ձեռքբերմանը: ***Պարտադիր վճարների*** գծով ծախսերը նախատեսվել են 2,000.0 հազար դրամ՝ գույքերի գրանցման համար անհրաժեշտ պետական տուրքերի և վճարների կատարման համար:

2. Պաշտպանության ոլորտի ծախսերը նախատեսվում են 1,210.0 հազար դրամի չափով: ***Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն*** ծրագրում ծախսերը նախատեսվում են 860.0 հազար դրամի չափով

3. Պաշտպանության ոլորտի ծախսերը նախատեսվում են 1,210.0 հազար դրամի չափով: ***Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն*** ծրագրում ծախսերը նախատեսվում են 860.0 հազար դրամի չափով:

4. Գյուղատնտեսություն ծրագրի ***Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*** հոդվածում նախատեսվում է ծախս անասնաբույժի ծառայությունների ձեռքբերման համար՝ 2,800.0 հազար դրամի չափով:
5. Ոռոգում ծրագրի ***Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում*** հոդվածում նախատեսվում է 300.0 հազար դրամ, ***Շենքերի և շինությունների կառուցման*** համար նախատեսվում է 211,000.0 հազար դրամ՝ բնակավայրերի հողատարածքները ոռոգելու համար համակարգի կառուցման նպատակով, որի ***Նախագծահետազոտական ծախսերի*** համար նախատեսվում է 8,000.0 հազար դրամ: ***Նյութեր և պարագաներ*** հոդվածում պլանային ցուցանիշը՝ 2,700.0 հազար դրամ է:
6. Նավթամթերք և բնական գազ ծրագրի ***Շենքերի և շինությունների կառուցման*** համար նախատեսվում է 150,500.0 հազար դրամ՝ բնակավայրերում գազամատակարարման համակարգի կառուցման նպատակով, իսկ ***Նախագծահետազոտական ծախսերի*** համար նախատեսվել է 8,500.0 հազար դրամ:
7. Ճանապարհային տրանսպորտ ծրագրում ***Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*** հոդվածում նախատեսվում են 1,500.0 հազար դրամ՝ ճանապարհային գծանումների, քերած ասֆալտի տեղափոխման ծառայությունների իրականացման համար: ***Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում*** հոդվածում նախատեսվել են 52,000.0 հազար դրամի ծախսեր՝ ասֆալտապատ ճանապարհների ընթացիկ նորոգման համար: ***Շենքերի և շինությունների կառուցման*** համար նախատեսվում է 441,000.0 հազար դրամ՝ ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար, որի մի մասը ծրագրվում է կատարել համայնքի բյուջեի միջոցներով, իսկ մի մասը՝ սուբվենցիոն ծրագրով: ***Նյութեր և պարագաներ*** հոդվածում նախատեսվել է 2,300.0 հազար դրամ՝ ճանապարհների կահավորման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով:
8. Տրանսպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ ծրագրի ***Նախագծահետազոտական ծախսերի*** համար նախատեսվել է 14,500.0 հազար դրամ:
9. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) հոդվածում նախատեսվել է **(22,000.0)** հազար դրամ ծախս:
10. Աղբահանում ծրագրի ***Կոմունալ ծառայությունների*** համար նախատեսվել է 2,880.0 հազար դրամ՝ թրթուրավոր տրակտորով աղբավայրի և շրջակա տարածքի աղբի մաքրման, հարթեցման և ծածկման ծառայությունների ձեռքբերման նպատակով: ***Ապահովագրական ծախսերի*** համար նախատեսվել է 750.0 հազար դրամ՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում գտնվող՝ աղբահանության և սանիտարական մաքրման նպատակով շահագործվող տեխնիկայի համար: ***Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում*** հոդվածով նախատեսված է 1,500.0 հազար դրամ՝ անհրաժեշտության դեպքում աղբարկղերի և տեխնիկայի ընթացիկ նորոգումն իրականացնելու համար: ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 222,356.0 հազար դրամ՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ընթացիկ գործունեության ապահովման, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման նպատակով: ***Այլ ընթացիկ դրամաշնորհներ*** հոդվածով նախատեսվում է 5,000.0 հազար դրամ՝ «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊ Ընկերության ընթացիկ պահպանման աջակցման համար: ***Շենքերի և շինությունների կառուցման*** համար հոդվածի ծախսը նախատեսվում է 131,000.0 հազար դրամ, ***Նյութեր և պարագաներ*** հոդվածում՝ 12,000.0 հազար դրամ: ***Տրանսպորտային սարքավորումներ*** հոդվածով նախատեսվել է 95,000.0 հազար դրամ՝ կոմունալ տեխնիկայի ձեռքբերման նպատակով:
11. Կեղտաջրերի հեռացում ծրագրի ***Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*** հոդվածում նախատեսվում է 400.0 հազար դրամ: ***Շենքերի և շինությունների կառուցման*** համար նախատեսվել է 310,000.0 հազար դրամ՝ ջրահեռացման համակարգի կառուցման նպատակով:
12. Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ ծրագրի ***Նախագծահետազոտական ծախսերի*** համար նախատեսվում է 15,000.0 հազար դրամ:
13. Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) ծրագրի ***Կոմունալ ծառայությունների*** համար նախատեսվել է 4,825.0 հազար դրամ՝ թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների ձեռքբերման նպատակով:
14. Ջրամատակարարում ծրագրի ***Էներգետիկ ծառայությունների*** համար նախատեսվել է 27,500.0 հազար դրամ, որն ուղղվելու է պոմպերի ծախսած էլեկտրաէներգիայի վճարմանը: ***Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*** հոդվածում ծախսը նախատեսվում է 500.0 հազար դրամ, ***Պարտադիր վճարներ*** հոդվածում նախատեսվել է 800.0 հազար դրամ՝ ջրի թույլտվության համար անհրաժեշտ վճարների իրականացման համար: ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 12,650.0 հազար դրամ՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ջրամատակարարման համակարգի սպասարկման համար: ***Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային***

կազմակերպություններին հոդվածով նախատեսվել է ծախս՝ 2,000.0 հազար դրամ, ***Այլ կապիտալ դրամաշնորհներ*** հոդվածում՝ 700.0 հազար դրամ: ***Շենքերի և շինությունների կառուցում*** հոդվածում նախատեսվում է 270,500.0 հազար դրամ՝ ջրամատակարարման համակարգի ընդլայման և բարեկարգման նպատակով: ***Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում*** հոդվածով նախատեսված է 80,000.0 հազար դրամ՝ ջրամատակարարման առկա համակարգերի կապիտալ վերանորոգման նպատակով:***Այլ մեքենաների և սարքավորումների*** համար նախատեսվում է 15,000.0 հազար դրամ՝ պոմպերի ձեռքբերման նպատակով, ***Նյութեր և պարագաներ*** հոդվածում՝ 3,000.0 հազար դրամ:

15. Փողոցների լուսավորում ծրագրի ***էներգետիկ ծառայությունների*** համար նախատեսվել է 15,420.0 հազար դրամ, որն ուղղվելու է փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի ծախսի վճարմանը: ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 5,190.24 հազար դրամ՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից արտաքին լուսավորության համակարգի սպասարկման համար: ***Շենքերի և շինությունների կառուցում*** հոդվածում նախատեսվում է 59,057.8 հազար դրամ՝ արտաքին լուսավորության համակարգի ընդլայման և բարեկարգման նպատակով: ***Նյութերի և պարագաների*** համար նախատեսվում է 5,800.0 հազար դրամ՝ լուսատուների ձեռքբերման նպատակով:

16. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ ծրագրի ***Նախագծահետազոտական ծախսերի*** համար նախատեսվել է 13,500.0 հազար դրամ:

17. Առողջապահության ոլորտում նախատեսվում է 500.0 հազար դրամ:

18. Հանգստի և սպորտի ծառայություններ ծրագրի ***Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների*** համար նախատեսվում է 500.0 հազար դրամ:

19. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրի ***էներգետիկ ծառայությունների*** համար նախատեսվում է 1,400.0 հազար դրամ, ***կոմունալ ծառայությունների*** համար՝ 500.0 հազար դրամ, ***Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*** հոդվածում՝ 500.0 հազար դրամ, ***Մասնագիտական ծառայությունների*** համար նախատեսվել է 100.0 հազար դրամ՝ գազի սպասարկման համար: ***Գյուղատնտեսական ապրանքներ*** հոդվածում նախատեսվել է 300.0 հազար դրամ, ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 35,000.0 հազար դրամ՝ համայնքային ուսումնամշակութային զարգացման կենտրոնի ընթացիկ պահպանման ծախսերի համար, ***Վարչական սարքավորումների*** համար նախատեսվում է 55,000.0 հազար դրամ՝ ներկայումս կառուցվող ուսումնամշակութային զարգացման կենտրոնի գործարկման համար անհրաժեշտ կահավորման նպատակով: ***Շենքերի և շինությունների կառուցում*** հոդվածում նախատեսվում է 355,770.5 հազար դրամ՝ ուսումնամշակութային զարգացման կենտրոնի շարունակվող շինարարության համար:

20. Այլ մշակութային կազմակերպություններ ծրագրում ***Գույքի և սարքավորումների վարձակալության*** համար նախատեսվում է 650.0 հազար դրամ, որն ուղղվելու է մշակութային միջոցառումների ժամանակ անհրաժեշտ ավտոմեքենայի կամ տեխնիկայի վարձակալությանը: ***Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների*** համար նախատեսվում է 3,600.0 հազար դրամ, որում ներառվելու են ազգային պարերի բաց դասերի կազմակերպումը, մշակութային մի շարք միջոցառումներ: ***Հատուկ նպատակային այլ նյութերի*** համար նախատեսվում է 3,100.0 հազար դրամ, որով ձեռք են բերվելու ամանորյա նվերներ համայնքի դպրոցների և մանկապարտեզների սաների համար, ***Այլ ընթացիկ դրամաշնորհներ*** հոդվածում՝ 700.0 հազար դրամ:

21. Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում ծրագրում ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 300.0 հազար դրամ: ***Շենքերի և շինությունների կառուցում*** հոդվածում նախատեսվում է 17,000.0 հազար դրամ՝ Ջրվեժ համայնքում գտնվող հուշարձանի տարածքի վերանորոգման, բարեկարգման նպատակով, ***Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում*** հոդվածի ծախսը նախատեսվում է 25,000.0 հազար դրամ:

22. Տեղեկատվության ձեռքբերում ծրագրի ***Տեղեկատվական ծառայությունների*** համար նախատեսվել է 450.0 հազար դրամ:

23. Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ ծրագրի **Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին** հոդվածով նախատեսվել է 285.0 հազար դրամ:

24. Կրոնական և հասարակական այլ ծառայություններ ծրագրի ***Այլ ընթացիկ դրամաշնորհներ*** հոդվածում նախատեսվել է 3,000.0 հազար դրամ՝ Ջրվեժ Հայ Առաքելական Սուրբ Կաթողիկե եկեղեցու կողմից ամանորյա, եկեղեցու ուխտի օրվա կապակցությամբ միջոցառումների, ամառային ճամբարի կազմակերպման նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնելու համար: ***Այլ կապիտալ դրամաշնորհներ*** հոդվածում նախատեսվել է 500.0 հազար դրամ:

25. Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ ծրագրի ***Նախագծահետազոտական ծախսեր*** հոդվածում նախատեսվել է 4,500.0 հազար դրամ՝ հուշարձանների տարածքի բարեկարգման աշխատանքների համար նախագծահետազոտական փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

26. Նախադպրոցական կրթություն ծրագրում ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 201,318.36 հազար դրամ՝ համայնքային ենթակայության մանկապարտեզների ընթացիկ գործունեության ապահովման, երեխաներին նախադպրոցական կրթությամբ ապահովման նպատակով: ***Մասնագիտական ծառայությունների*** համար նախատեսվել է 200.0 հազար դրամ՝ գազի սպասարկման համար: ***Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին*** հոդվածում նախատեսվում է 5,500.0 հազար դրամ: ***Շենքերի և շինությունների*** կառուցում ծրագրում՝ 184,500.0 հազար դրամ ***Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում*** հոդվածով նախատեսված է 45,500.0 հազար դրամ՝ անհրաժեշտության դեպքում մանկապարտեզների շենքերի վերանորոգում իրականացնելու համար: ***Վարչական սարքավորումների*** հոդվածով նախատեսվում է 17,800.0 հազար դրամ՝ մանկապարտեզների կարիքների համար հիմնական միջոց համարվող գույքի ձեռքբերման նպատակով: ***Նախագծահետազոտական ծախսեր*** հոդվածում նախատեսվել է 9,500.0 հազար դրամ: ***Աճեցվող ակտիվներ*** հոդվածով նախատեսվում է 5,000.0 հազար դրամ՝ մանկապարտեզների տարածքների կանաչապատման համար:

27. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ծրագրում ***Գրասենյակային նյութեր և հագուստ*** հոդվածով նախատեսվում է 3,000.0 հազար դրամ՝ սեպտեմբերի մեկի առթիվ երեխաներին գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով: ***Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվում է 500.0 հազար դրամ, իսկ ***Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվում է 44,000.0 հազար դրամ՝ Ջրվեժ բնակավայրում գործող «Ջրվեժի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ համայնքային ուսումնամշակութային զարգացման կենտրոնի հարակից տարածը բարեկարգելու և պարսպապատելու նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնելու նպատակով:

28. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրում ***Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվում է 41,518.4 հազար դրամ՝ Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց ԱԿՈՒՀ ՀՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ապահովման, կրթական ծառայությունների մատուցման նպատակով:

29. Լրացուցիչ կրթություն ծրագրում ***Այլ ընթացիկ դրամաշնորհներ*** հոդվածում նախատեսվել է 1,440.0 հազար դրամ՝ Ջրվեժի Հայ Առաքելական Սուրբ Կաթողիկե եկեղեցու կողմից անապահով ընտանիքների երեխաների համար ուսուցման կազմակերպման նպատակով:

30. Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ ծրագրի ***Այլ ընթացիկ դրամաշնորհներ*** հոդվածում նախատեսվել է 7,000.0 հազար դրամ՝ Մանկական զարգացման հիմնադրամի Զարման զարգացման կենտրոնի 2026 թվականի ընթացիկ պահպանման համար:

31. Սոցիալական պաշտպանության ոլորտի ***Հուղարկավորության նպաստներ բյուջեից*** հոդվածում նախատեսվում է 240.0 հազար դրամ, ***Այլ նպաստներ բյուջեից*** հոդվածում նախատեսվում է 3,000.0 հազար դրամ: Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ***Այլ նպաստներ բյուջեից*** հոդվածում նախատեսվում է 10,080.0 հազար դրամ:

Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 2,574,530.0 հազար դրամի չափով դեֆիցիտ (պակասուրդ):

Ջրվեժ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագիծն առաջարկվում է հաստատել.

- ✓ *եկամուտների գծով՝* ***1,024,730.7*** *հազար դրամ,*
- ✓ *ծախսերի գծով՝* ***3,599,260.7*** *հազար դրամ,*
- ✓ *դեֆիցիտը՝* ***2,574,530.0*** *հազար դրամ:*

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ